«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների ծնողների կրթադաստիարակչական ներուժն օգտագործելու ուսուցչի հնարավորությունները

ԱՌԱՐԿԱ՝ Ֆիզիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Լյուբա Մեխակի Օհանջանյան

ՄԱՐԶ՝ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԸՆՏԱՆԻՔԻ և ԴՊՐՈՑԻ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 4

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ 8

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՆՊԱՏԱԿԸ 9

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ 12

Ի՞ՆՉ Է ՀԱՋՈՂՎԱԾ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 14

Ի՞ՆՉ Է ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ 14

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 15

ԱՄՓՈՈՒՄ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարմարավետ կրթական միջավայրի ստեղծումը կարևորագույն գործոններից է, որը նպաստում է երեխայի բնականոն զարգացմանն ու նրա՝ որպես հասարակության անդամ և քաղաքացի ձևավորմանը:
Կրթական միջավայրը մարդու սոցիալական աշխարհի անբաժանելի մասն է: Ուստի դպրոցը երեխայի համար պետք է լինի հարմարավետության կարևոր օբյեկտ: Այս առումով ուսուցիչների հիմնական նպատակներից մեկը աշակերտների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումն ու բոլորի համար հավասար ու հասանելի պայմաններիու հնարավորությունների ապահովումն է:
Ուսումնական միջավայրը պետք է օգնի բացահայտել սովորողի անհատական հետաքրքրությունները, հակումներն ու կարողությունները, զարգացնել այն հմտությունները, որոնք արդեն ի հայտ են եկել նրա հոգեկան տարբեր ոլորտներում (ֆիզիկական, հուզական, ճանաչողական, անձնական, հոգևոր, բարոյական): Դաստիարակության մեջ կրթականմիջավայրի դերը գիտակցող ուսուցիչը մեծ նշանակություն է տալիս նրա դաստիարակչական ազդեցության ուժեղացմանը: Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար:
Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրումտատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այստեղ «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:
Խնդիրներին լուծում տալու համար տվյալ դեպքում, ուսուցիչ-աշակերտ անընդհատ կապից բացի, պահանջվում է, իհարկե, ուսուցիչ-ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցություն և փոխվստահություն: Բայց այս առումով կցանկանայի ընդգծել հատկապես մի հանգամանք: Ծնողը պիտի խոսի իր երեխայի հետ: Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխային, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, մարդուց ու մարդկությունից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կտա կամ կփոխանցի իր զավակին:
Մարդկային կյանքը լուցկու տուփի նման է. նրան շատ լուրջ վերաբերելը ծիծաղելի է, անլուրջ վերաբերելը՝ վտանգավոր: Մեր աշակերտների անմեղ- վտանգավոր այն տարիքն է, որ չարժի ոչ լուն փիղ դարձնել, ոչ էլ շատ հանգիստ լինել: Մեզանից յուրաքանչյուրն է հիշում մանկությունից մեր հոգին լցնող ու էությունը պարուրող այն նվիրական, անմնացորդ հավատը, որն ունեինք ծնողի ամեն մի խոսքի, գործի նկատմամբ:

Հիմա մեր աշակերտները նույն այդ տարիքում են: Ու հիմա է, որ նրանց միտքն ու հոգին մաքուր գրատախտակ են հիշեցնում, ու ինչ գրենք, այդ էլ կտպվի նրանց ուղեղում:

Վերադառնալով ուսուցչի և ծնողի համագործակցությանը՝ հավելեմ, որ ուսուցիչ-ծնող կապն աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպման կարևորագույն բաղադրիչ օղակներից է: Մենք ունենք մեկ ընդհանուր նպատակ՝ կրթել, դաստիարակել, զարգացնել երեխային, ուստի մեր փոխհամագործակցությունը և միմյանց հետ մշտական կապ պահպանելը բխում է հենց այդ նպատակի իրագործումից, երկու կողմերի շահերից, բայց ոչ, երեք կողմերի շահերից. չմոռանանք աշակերտին, որն այս ողջ գործընթացի կենտրոնն է, այն կենտրոնը, որի շուրջ պտտվում է մնացյալ ամեն բան…

Ընտանիքի և դպրոցի փոխներգործությունն ու համագործակցությունը

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբվստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց ու երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Երեխաների, ծնողների, ուսուցիչների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորումն ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ գործընթացում ավագների միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների

հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ ենքննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը
ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները:
Դասղեկը ծնողներին ներգրավում է դպրոցի կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում.
• Երեխաների դաստիարակությանը վերաբերող դպրոցական կյանքի հիմնախնդիրների քննարկում և լուծում,
• Ծնողների մասնակցություն դաստիարակչական աշխատանքներին և միջոցառումներին, ուսումնական կաբինետների ձևավորմանը, արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը,
• Ծնողների մասնակցություն դպրոցում և դասարանում ինքնակառավարման մարմինների (ծնողական ժողովներ, համաժողովներ, ծնողական կոմիտեներ և այլն) ստեղծմանը, դրանց գործունեության կազմակերպմանը:
Ուսուցիչների, դասղեկների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողներիև երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական միջոցառումների կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների և սովորությունների ներկայացմանը:
Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Իսկ ինչպե՞ս արթնացնել ուսուցիչների նախաձեռնողականությունը, դպրոցական կոլեկտիվում ստեղծել մանկավարժական նախագծի իրականացման ուղղությամբ գործունեության դրական դրդապատճառներ: Այս ամենը հնարավոր է դասղեկների կողմից երիտասարդ մանկավարժներին կոնկրետ աջակցություն ցուցաբերելու միջոցով: Սկսնակներին
հարկավոր է օգնել դասարանական կամ դպրոցական ծնողական ժողովներում
զեկուցումներ կամ ելույթներ նախապատրաստելիս: Այս ուղղությամբ աշխատանքի նախագծման ժամանակ պետք է ամրապնդել դպրոցի և ծնողների փոխհարաբերությունները, ձևավորել արդյունավետ գործող ծնողական խորհուրդ՝ հավասարապես բաժանելով կրթության որակի պատասխանատվությունը: Համագործակցության համակարգում իրականացվում են.
. դասարանական և համադպրոցական ծնողական ժողովներ,
.անհատական խորհրդատվություն,
. հանդիպումներ մանկավարժների և հոգեբանների հետ:
Ծնողների խորհրդատվությունն այսօր դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված ուղղությունն է: Ծնողների մեծամասնությունը ինքնակրթության համար ժամանակ չի ունենում: Սովորաբար խորհրդատվության համար դիմում են դպրոցին: Որպես կանոն, դա լինում է հատկապես ծայրահեղ իրավիճակներում՝ երեխայի վատ առաջադիմության կամ վարքի դրսևորման ժամանակ:

Խորհրդակցության հիմնական նպատակը ծնողների կողմից երեխայի հիմնախնդիրների, նրա անձի մասին ամբողջությամբ ավելի խոր և օբյեկտիվ պատկերացում ունենալն է, սեփական դաստիարակչական ուղեծրի ու կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ շփման միջոցների որոշումը:

Մեր կարծիքով՝ Դպրոցական համակարգում պետք է գործի հոգեբանական, մանկավարժական և բժշկական խորհրդատվության ծառայություն, որը կստանձնի բեռնվածության մասը և բավական հաջողությամբ կլուծի ծագող հիմնախնդիրները: Հոգեբանը կամ սոցիալական մանկավարժը կարող են օգնել՝ որոշելու ծնողների հետ համագործակցության նպատակը: Հատկապես հենց նրանք են տիրապետում այնպիսի տեղեկույթների, որոնք երբեք չեն ձեռքբերվում հարցման միջոցով: Ակնհայտ է, որ դժվար է դպրոցում իրականացնել յուրաքանչյուր երեխայի ծնողի հետ փոխներգործությունն ու համագործակցությունը իրենց մեջ ներառող հիմնախնդիրների ամբողջ ծավալով: Սակայն հարկավոր է հոգեբանամանկավարժական ուղեկցությունը կազմակերպել այնպես, որ երեխան օգնություն և փոխըմբռնում որոնի ընտանիքում: Այդպիսի ծառայության նպատակը, թերևս, երեխաների կրթության, դաստիարակության և զարգացման նպաստավոր պայմանների ապահովումն է, իսկ ամենակարևոր պայմաններց մեկը, անշուշտ, դպրոցի ու ընտանիքի համագործակցությունն
է:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության ու փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս, երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է: Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու
պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքին ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Ծնողների խորհրդատվության կազմակերպումը դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Մի կողմից այն խիստ անհատական է, մյուս կողմից էլ անհրաժեշտ է հետևել ծնողների և երեխաների դժվարություններին, որպեսզի մանկավարժական շտկողական գործունեությունը չլինի ժամանակավրեպ: Այսպիսի խնդիրների լուծման լավագույն տարբերակը դպրոցական հոգեբանի հաստիքի ստեղծումն է: Իսկ դպրոցի վարչանու խնդիրը կլինի նմանատիպ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի մշակումը և համակարգային վերլուծությունը: Ծնողների խորհրդատվությունը կարելի է կազմակերպել երկու տեսանկյունից՝ մեթոդական (այն
ամենը, ինչ վերաբերում է ուսումնական ծրագրերի յուրացմանը, առանձին աշակերտների կրթական գործընթացի հետագծին, նոր ընդունված երեխաներին, օժտված երեխաների լրացուցիչ կրթությանը) և հոգեբանական (այն ամենը, ինչ վերաբերում է երեխայի անհատական առանձնահատկություններին ու նրա հանրայնացմանը):

Երկու դեպքում էլ անհրաժեշտ է պահպանել փոխվստահության, փոխադարձ հարգանքի, խորհրդատվության նկատմամբ հետաքրքրությունների, կոմպե-տենտության, ծնողների միջավայրում խնդիրներն ինքնուրույն լուծելու դիրքորոշումների մշակման, խորհրդատվությունների որակի ապահովման սկզբունքները: Գաղտնիք չէ, որ երեխաների ծնողները զբաղված մարդիկ են: Ուստի խիստ կարևոր է, որ խորհրդատվությունը կազմակերպվի նաև ծնողներին հարմար ժամերի, որպեսզի հնարավորություն ունենան միաժամանակ այլ խնդիրներ լուծել: Դպրոցում պետք է լինի հանդուրժողականության և հյուրընկալ ջերմ մթնոլորտ, քանի որ դպրոցի ու ծնողի համագործակցությունն սկսվում է դպրոցի նախասրահից: Յուրաքանչյուր դպրոցում, անշուշտ, կան հատուկ ուշադրության կարիք ունեցող, անապահով կամ սովորական, բայց դժվարություններ ունեցողաշակերտներ: Նման պարագայումխնդիրը բավականաչափ թեթևանում է, եթե դպրոցում սոցիալական մանկավարժ է աշխատում: Ծնողների առաջին սեմինարին պետք է ներկայացվի դպրոցի գրադարանի, բուժկետի, բուֆետի աշխատանքի, վարչանու ընդունելության ժամանակացույցը, այնուհետև առաջարկվող կրթական ծրագրերը, անհրաժեշտ աղբյուրներն ու պաշարները՝ դրանց իրականացման տարբեր փուլերում: Աշակերտների ֆիզիկական և հոգեբանական բեռնվածության կանխարգելման և ճիշտ պլանավորման նպատակով հարկավոր է իրականացնել այդ թեմաներով տեղեկատվության տրամադրում: Բանն այն է, որ հաճախ ծնողների մրցակցությունը հանգեցնում է այն իրավիճակին, որ երեխային ստիպում են կատարել ուժերից վեր առաջադրանքներ: Դա էլ ունենում է հակառակ արդյունք: Խիստ կարևոր է այն բոլոր կարողությունների առանձնացումը, որոնք բնութագրական կլինեն միջին ցուցանիշներով՝ երեխայի առաջընթացի արձանագրման համար:

Ծնողների համար կազմակերպվող սեմինարները ենթադրում են քննարկումներ և գործընթացների ցուցադրումներ: Սեմինարներին մանկավարժները ևս լրացնում են իրենց գիտելիքները, բազմապատկում փորձը: Սեմինարների ավարտին խիստ կարևորվում է հետադարձ կշռադատող հայացքով քննարկման անցկացումը:

Սեմինարների քննարկան թեմաներ կարող են դառնալ աշակերտների հարմարվելը կրթական գործունեության պայմաններին, երեխաների զարգացման տեմպերը և այդ ոլորտում հիմնախնդիրների ու խոչընդոտների բացահայտումը, դպրոցի, դասարանի նկատմամբ երեխայի վերաբերմունքը, երեխաների ինքնուրույնության զարգացումը,

կրթական գործընթացում ուսուցման գործուն միջավայրի ձևավորումը, փոխօգնության և հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ստեղծումը և այլն:

Ծնողների համար կազմակերպվող այդպիսի սեմինարների պրակտիկան ցույց է տալիս դրանց արդյունավետությունը: Այսպիսով, մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձ: Ընտանիքում է ձևավորվում և մշակվում մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է

կրթությունը: Որպես մի շարք գործոնների և ազդեցությունների համակցություն այն ուղեկցում է մարդուն՝ ծնված օրից մինչ չափահասություն: Կրթության համար պատասխանատվություն են կրում ընտանիքը և դպրոցը: Այդ տեսակետից բացարձակ անհրաժեշտություն է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև հաղորդակցման բարելավումը և նրանց իրական համագործակցության կառուցումը: Եթե

մենք իսկապես ուզում ենք բավարարել մեր հասարակության կրթական կարիքները, անհրաժեշտ է սովորողների ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել ընդհանրական և արդյունավետ դարձնելու նպատակով: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ինչպես Վ. Հյուգոն էր ասում.

«Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ և կազմում նրա անկապտելի մասը»: Կարևորը ճիշտ դաստիարակության սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ, հոգատար, հանգիստ, հավասարակշռված և ուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների և ուսուցիչների հետ: Ծնողները երեխայի առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ՝ իրենց երեխաների կյանքի, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար:

Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական տարիքի երեխաների կրթության համար: Իսկ պետությունը պարտավոր է որդեգրել մի այնպիսի կրթական համակարգ, որը կապահովի մարդու ամբողջ կյանքի ուսումնառությունը և անձնական զարգացման համար անհրաժեշտ հիմքեր: Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները և պատասխանատվությունը: Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՝ ընտանիքներում, և դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Ո՛չ ծնողները, ո՛չ ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները, հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝ հասարակության մեջ պատշաճ կերպով ինտեգրվելու համար: Եվ՛ ընտանիքը, և՛ դպրոցը երկուստեք հաճախ սկսում են կորցնել կողմնորոշումը՝ կանգնելով այնպիսի բարդ խնդիրների առաջ, ինչպիսիք են՝ գերտեղեկատվությունը և զանգվածային լրատվության միջոցների կողմից առաջարկվող այլընտրանքային մոդելները: Այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը: Ուսուցիչ-ծնող ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Հենց առաջին օրերից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ:

Դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում ուսուցչը: Նա իր ժողովրդի այն զինվորն է, որի զենքը գիտությունն է: Նա տիրապետում է մարդ դաստիարակելու արվեստին: Իր գործին նվիրված ուսուցչի ամբողջ կյանքն անցնում է սերունդներին կրթելու և դաստիարակելու նորանոր ուղիների որոնման մեջ: Դաստիարակության բուն էությունը աշակերտներին և նրանց զգացմունքներին ճիշտ ուղղություն տալն է: Ռուս մանկավարժ Պիսարևն ասել է. «Դաստիարակության մեջ ամբողջ գործն այն է, թե ով է դաստիարակում»: Դասարանի անդամները սեփական ընտանիքների յուրատիպ արտացոլումն են, և մեծ ուժ է անհրաժեշտ, որպեսզի դասարանում ուսուցիչն ստեղծի միասնական առողջ մթնոլորտ: Այդ կոլեկտիվի միջանձնային ներդաշնակ հարաբերությունները կնպաստեն առաջադիր նպատակների իրականացմանը և հաջողությունների ձեռքբերմանը: Այս ասպարեզում յուրաքանչյուր անհատ իրեն զգում է լիիրավ գործող անդամ և ամեն պարագայում պատասխանատու անձ: Դասարանի յուրաքանչյուր ոք կձգտի խորհրդակցել, իր հաջողություններով ուրախացնել, կամ դժվարությունները կիսել հարազատ դարձած մարդկանց հետ: Ուսուցչի պարտքն է՝ ճանաչել ու հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները, պաշտպանել նրանց՝ դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում: Այս բոլոր գործոնները երեխաներին կհաղորդեն պաշտպանվածության զգացում և ինքնավստահություն, կստեղծեն ստեղծագործնական ակտիվություն ու լիարժեք զարգացում: Մանկավարժության մեծագույն նվաճումը ոչ միայն դաստիարակության զարգացման տեսական մոտեցումների մշակումն է, այլև առկա հիմնախնդիրների գործնական լուծումների արդյունավետ փորձերը: Դաստիարակչական ներգործությունը մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: Հակառակ դեպքում թե՛ մեկը, թե՛ մյուսը դրական արդյունք չեն կարող տալ: Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝ ուսուցում, գնահատում և հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում:

Դպրոցական ուսուցումը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են՝ հետաքրքրասիրությունը, ուշադրությունը, պահանջկոտությունը և բնավորության մի շարք այլ գծեր: Դաստիարակչական աշխատանքը հիմնականում նպաստում է երեխայի լայն և խոր ճանաչողական հետաքրքրությունների, ինքնակրթության, ինքնազարգացման պահանջմունքների ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական մեթոդների հիմքում ընկած են երեխայի ազատ մտածողության, վերլուծական, ստեղծագործական մտածողության, տրամաբանության, ինչպես նաև արագ կողմնորոշվելու ունակության զարացումը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Ժամանակի մեծ մտավորականներից մեկն ասել է. «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն»:

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ


ԱՇԱԿԵՐՏ
1
Երեխային ճանաչելու և նրա կարիքները համատեղ բացահայտելու գործընթացի իրականացում
2
Ծնողների և երեխաների կարիքների հիման վրա ծնողական լուսավորության ծրագրի մշակում և իրականացում:
3
Երեխաների անվտանգության ապահովման եվ իրավունքների պաշտպանության ոլորտում սերտ համագործակցության ապահովում, դասվարի, երեխաների և ծնողների մասնակցությամբ դասարանական և դպրոցական կանոնների մշակում
4
Երեխայի ուսումնաճանաչողական ձեռքբերումների համատեղ քննարկում, խոչընդոտների բացահայտում և նրա հետ անհատական զարգացման
ակցման ծրագրի մշակում
5
Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ դասվարի, աշակերտների և դասարանական ծնողական կոմիտեի համատեղ գործունեության պլանավորում և իրականացում
6
Դպրոցի զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման գործում ծնողական համայնքի մասնակցության ապահովում
7
Դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծում և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրում
8
Կրթության հաջորդ աստճանների շարունակականության ապահովում, համատեղ գործունեության իրականացում

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդելի նպատակը ընտանիք-դպրոց համագործակցության խթանումն է: Այն նպաստում է դաստիարակչական միասնական տարածքի ստեղծմանն ու ընտանեկան և դպրացական դաստիարակության ինտեգրմանը և կարող է ներդրվել ներդպրոցական կառավարման համակարգում:

Մոդելի հիմքում ընկած են երկու առանցքային սկզբունքներ.

Ծնողներն ու ուսուցիչները գիտակցում են, որ ա/ աշակերտն է իր զարգացման սուբյեկտը, իսկ մեծահասակները՝ այդ գործընթացում համահեղինակներ են, բ/ աշակերտը իրավունք ունի մասնակցելու իր կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունելուն: ՈՒստի ,մոդելի կենտրոնում աշակերտն է՝ իրեն վերաբերող հիմնախնդիրներով , որոնց լուծմանն ուղղված յուրաքանչյուր բաղադրիչի իրագործմանը ուսուցչի և ծնողի հետ միասին հնարավորություն ունի մասնակցելու նաև ինքը: Մոդելի բաղադրիչները լրացնում են միմյանց և ինտեգրվում՝ դառնալով մեկ ամբողջություն:

1
Երեխային ճանաչելու և նրա կարիքները համատեղ բացահայտելու գործընթացի իրականացում

- Ուսուցչի և ծնողի կողմից աշակերտի հետաքրքրությունների, հակումների, պահանջմունքների և կարիքների բացահայտում, համատեղ քննարկում և դրանց բավարարման համար աշակերտի հետ և աշակերտի ցանկությամբ համապատասխան քայլերի իրականացում:

2
Ծնողների և երեխաների կարիքների հիման վրա ծնողական լուսավորության ծրագրի մշակում և իրականացում:

- Ուսուցչի կողմից ծնողների **և** երեխաների շրջանում հարցումների անցկացում և դրանց արդյունքների վերլուծություն:Դրանց հիման վրա ծնողների մանկավարժական գիտելիքների, կարողությունների և կուլտուրան բարձրացնելու նպատակով ծնողական լուսավորությանն ու խորհրդատվությանն ուղղված միջոցառումների իրականացում:

3

Երեխաների անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության ոլորտում սերտ համագործակցության ապահովում: Դասվարի, երեխաների և ծնողների մասնակցությամբ դասարանական և դպրոցական կանոնների մշակում:

- Ուսուցչի կողմից աշակերտների ֆիզիոլոգիական և հոգեբանական անվտանգության պայմանների քննարկում ծնողների հետ՝ դասարանական և ընտանեկան առողջ մթնոլորտ ստեղծելու, երեխաներին պիտակավորելը և ծաղրելը բացառելու,դասարանի և տան հարմարավետությունն ու վալեոլոգիական պահանջները պահպանելու նպատակով: Համատեղ քննարկումներ տանը և դպրոցում Երեխայի ազատության և իրավունքների իրացման համար պայմաններ և հնարավորություններ ստեղծելու նպատակով:

4

Երեխաների ուսումնաճանաչողական ձեռքբերումների համատեղ քննարկում, խոչընդոտների բացահայտում և նրա հետ անհատական զարգացման աջակցման ծրագրի մշակում

- Ուսուցիչ-ծնող փոխադարձ տեղեկատվության փոխանցում և քննարկում՝ աշակերտների ուսումնադաստիարակչական նվաճումների, տնային և ինքնուրույն առաջադրանքների կատարման ընթացքում ծագած դժվարությունների և խոչընդոտների ու դրանց հաղթահարման վերաբերյալ:
 Աշակերտի համաձայնությամբ և ծնողի իմացությամբ աշակերտի անհատական զարգացման ծրագրի համատեղ մշակում՝ մանկավարժական աջակցության նպատակով:
 Ծնողական ժողովներին աշակերտների մասնակցության ապահովում:

5

Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ միջոցառումների դասարանական ծնողական կոմիտեի համատեղ գործունեության պլանավորում և իրականացում

- Ուսուցչի նախաձեռնությամբ քննարկումների կազմակերպում աշակերտների հետաքրքրություններով և ծնողների ընտրությամբ նրանց մասնակցությունը արտադասարանական և արտադպրոցական դասարանամիջյան աշխատանքներին ապահովելու նպատակով:
 Ծնողների կողմից իրենց երեխաների օգնությամբ մասնագիտության օրերի դասարանական միջոցառումների շարքի կազմակերպում

6
Դպրոցի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործում ծնողական համայնքի մասնակցության ապահովում

- Ուսուցչի կողմից ծնողներին դպրոցի, դասարանի հոգաբերին [illegible] գործունեության նրանց մասնակցությունը դպրոցի զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը ապահովելու նպատակով:

7
Դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծում և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրում

- Ծնողներին դաստիարակչական միասնական և միջավայրի ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրման մասին գիտելիքների, գաղափարների և այլ տեղեկատվության փոխանցում, տանը և դպրոցում երեխայի նկատմամբ միասնական պահանջների,հնարավորությունների և պայմանների ներկայացում ու ստեղծում:

8
Կրթության հաջորդ աստճանների հաջորդականության ապահովում, համատեղ գործունեության իրականացում

- Ուսուցչի կողմից դպրոցի հաջորդ աստիճանի անցման խնդիրների բացահայտում և ծնողներին ու աշակերտներին խորհրդատվության մատուցում:
- Ծնողների հետ, երեխայի մասնակցությամբ,յուրաքանչյուրի կարիքների, մտահոգությունների, խնդիրների և ակնկալիքների քննարկում և որոշման ընդունում՝ կրթության հաջորդ աստիճանին անցնելու վերաբերյալ:

1. Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:
«Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության

վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա:

Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ
- հնարավորություններ և պայմաններ ունի. Ծնողների հետ համատեղ ընթերցանությունը երեխայի մեջ
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:
Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական որդուն.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.
- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այկևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի.
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այնծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.

- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը

Ծնողի հաջողված ներգրավվածություն կարելի է հասկանալ որպես ծնողի ակտիվ, կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածություն կարող է և տանը լինել, երբ ծնողը երեխաների հետ միասին կարդում է, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար
համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեջ:

Ի՞նչ է ծնողների ներգրավվածության արգելքը

Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործունեության մեջ, մտածելով, որ նրանք գլուխ չեն հանի դրանից: «Սա արդեն նախնական սխալ կարծիք է: Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել» հայտարարեց Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկիսի համալսարան, դպրոցում ծնողների ներգրավվածությանը ամենաազդեցիկ աջակցողներից մեկը):
Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքին ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև նրանք լավ չեն խոսում վրացերեն, ինչպես նաև մեծ հիմնախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են, որ նրանց դպրոցում սիրով չեն սպասում: Սա, մասնավորապես, հաճախ բացասական փորձի հետևանքէ, որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս:
Դպրոցները, որոնք հաջողության են հասել ծնողների ներգրավվածության հարցով, միայն ներգրավվածության պարզ սահմանումների շրջանակներում չեն գործում: Նրանք չեն սահմանափակվում միայն ժողովներին ներկա կամ միջոցառումներին սեփական ցանկությամբ ներգրավված ծնողների հաշվարկներով, ավելորդ քանակով. նրանք ավելորդ կողմնորոշված չեն այնպիսի պահանջներին, ինչպիսիք են ծնողի ստորագրությունը աշակերտի տնային առաջադրանքում: Նրանք հավատում են, որ աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր հետաքրքրությունն է, ուսման պրոցեսում ծնողին գործընկեր են համարում, իսկ հետագայում այս գործընկերության ուժեղացման կոնկրետ ուղիներն են որոշում: Հաջորդ մասում ծնողների ներգրավվածության ոլորտում եղած հիմնխնդիրների լուծման երեք ճանապարհ է ներկայացված. 1) հաղորդակցման բարելավում, 2) ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացում, և հաղորդակցման բարելավում, 3) անհատականացում:

Հաղորդակցման բարելավում

Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն:



Մանկավարժները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին: Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն:: Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակույթային տարբերությունը:
Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցինկատմամբ դրական կապվածություն:
Բնական է, օգտագործված ռազմավարությունները հարմարեցված պետք է լինեն դպրոցական հասարակությանը: Եթե ընտանիքները չունենան որակավոր համացանց, եթե էլ-փոստով չստանան հղումներ, եթե վրացալեզու հեռախոսային տեղեկությունը հասկանալի չլինի աղրբեջաներեն կամ հայերեն լեզվով խոսող ծնողներին՝ հաղորդակցությունը չի կարող բարելավվել: Դպրոցները հաղորդակցության այնպիսի ստրատեգիաներ պետք է կիրառեն, որոնցում կարևոր ասպեկտները ծնողների համար հասկանալիորեն հաղորդվելն է, և նրանց խրախուսելը դեպի զարգացած և ակտիվ ներգրավում:

Հաղորդակցումը բարելավելու նպատակով, կարելի է առաջարկել հետևյալ ակտիվությունները.

- Հանդիպե՛ք և ջերմորեն ընդունեք ծնողին

- Ողջունե'ք նոր աշակերտներին և նրանց ծնողներին

- Խրախուսե՛ք կամավոր ծնողներին
- Սահմանեք հաղորդակցման ձևը
- Պլանավորե՛ք բաց դռների օր / ծնողի օր

ԱՄՓՈՒՄ

Այսուհանդերձ ծնողների արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը , որն իրականացնում է դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը:
Ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես են զարգանում հարաբերությունները ուսուցիչների, աշակերտների և ծնողների միջև: Ծնողներն ու ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են, և կրթության արդյունքը կարող է հաջող լինել, երբ ուսուցիչներն ու ծնողները դաշնակիցներ դառնան:
Ընտանիքը իրավամբ համարվում է երեխայի զարգացման ու դաստիարակության հիմնական գործոնն ու պայմանը: Այստեղ է, որ նա ծնվում է (ցանկալի կամ անցանկալի), այստեղ նա ստանում է ֆիզիկականի և հոգևոր զարգացում (դրական կամ բացասական), առաջին գիտելիքները մեզ շրջապատող աշխարհի մասին, այստեղ ձևավորվում են գործունեության բոլոր տեսակների առաջին հմտություններն ու կարողությունները, լավը, ճշմարտությունը, գեղեցկությունը գնահատելու նախնական չափանիշները: Նրա կյանքի մեծ մասը տեղի է ունենում այստեղ, դրվում են աշխարհի հետ նրա հարաբերությունների հիմքերը, այսինքն. սկսվում է կրթության գործընթացը:
Դպրոց ունեցող ընտանիքը ստեղծում է դաստիարակչական միջավայրի գործոնների այդ կարևորագույն համալիրը, որը որոշում է ողջ կրթական գործընթացի հաջողությունը կամ ձախողումը:
Ժամանակակից ընտանիքը զարգանում է որակապես նոր, հակասական սոցիալական իրավիճակում: Մի կողմից, հասարակության շրջադարձը դեպի ընտանեկան խնդիրներ է, մշակվում և իրականացվում են բարդ նպատակային ծրագրեր `երեխաների դաստիարակության գործում դրա կարևորության ամրապնդման և բարձրացման համար: Մյուս կողմից, կան գործընթացներ, որոնք հանգեցնում են ընտանեկան խնդիրների սրմանը: Սա, առաջին հերթին, ընտանիքների մեծ մասի կենսամակարդակի անկումն է, տնտեսական և երբեմն նույնիսկ ֆիզիկական գոյատևման խնդիրների լուծումը ամրապնդել է շատ ծնողների սոցիալական տենդենցը ` հետ կանգնել կրթության և լուծման հարցերի լուծումից: անձնական զարգացում երեխա
Հետևաբար, այսօրվա ծանր պայմաններում ընտանիքը դպրոցից համակարգված և որակյալ օգնության կարիք ունի: Ընտանիքի և դպրոցի փոխգործակցության գործընթացն ուղղված է ծնողների ակտիվ ներգրավմանը ուսումնական գործընթացում, արտադասարանական ժամանցի միջոցառումներին, երեխաների և ուսուցիչների հետ համագործակցությանը

Եզրակացություն

Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ դպրոցները պետք է աշխատակցեն նրանց հետ, որպեսզի դպրոցն ու ընտանիքը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին:

Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցները, որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծրագրեր գոյություն ունեն, ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են.

- Հաճախության բարելավում;
- Բարձր առաջադիմություն,
- Աշակերտների լավ վարք;
- Ծնողների վստահության բարձրացում դպրոցի ու ուսմոն նկատմամբ:

Աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին.

- Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:
- Համարվում են գործընկեր երեխաներիուսման ու զարգացման գործում:
- Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու դպրոցի գործունեությանը:
- Մշտական շփում ունի դպրոցի անձնակազմի հետ:
- Դպրոցը տալիս է օգտակար տեղեկատվություն,ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ.Դ Ուշինսկու մանկավարժական հայացքները
2. <<Քայլ առ քայլ>>-ի չափորոշիչների կիրառումը դասարանում
3. Նախաշավիղ 1 .2012
4. Վ. Դ. Սեմյոնով /Փոխազդեցություն դպրոցի և սոցիալակն միջավայրի միջև
5. Վ.Դ. Սեմյոնով/ Մանկավարժություն
6. «Դպիր» ամսագիր
7. Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը, Ժ. Ջոնս, Ս. Իգնել
8. Ս. Վարդումյան, Ն. Ջադինյան, Լ. Հարությունյան, Գ. Վարելլա, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. տեսություններ, մեթոդներ, գնահատում, Երևան, 2005, Նոյյան Տապան: